

ԻՆՉՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(?) ԸՆՏՐԵԼ

Կրթության և աշխատաշուկայի միջև
համագործակցության այլընտրանքային
մոդելների ներդրում

Քաղաքականության համառոտագիր


Մարինա Գալստյան
Երիտասարդական ուսումնասիրությունների
ինստիտուտ
Նոյեմբեր, 2017

1

Երիտասարդների զբաղվածության ընդհանուր վիճակը

Երիտասարդների շրջանում գործազրկության և զբաղվածության ցուցանիշներում վերջին տարիների ընթացքում կտրուկ փոփոխություններ չի գրանցվել: Ինչպես ցույց են տալիս պաշտոնական վիճակագրական տվյալները, ինչպես նաև հետազոտական արդյունքները, երիտասարդների զբաղվածության մակարդակը միջինում կազմում է շուրջ 32 %, իսկ գործազրկությունը՝ 28%: Ընդ որում, այս ցուցանիշները, շատ փոքր տատանումներով՝ 1-2 % չափով, վերջին 10 տարիների ընթացքում նույնն են մնացել՝ չնայած տարվող պետական, միջազգային ծրագրերի և ներդրումների: Երիտասարդների զբաղվածության ամենաբարձր ցուցանիշ դիտարկվում է 25-29 տարիքային խմբի մոտ՝ 53 %, իսկ ամենացածրը՝ 15-19 տարիքային խմբի մոտ՝ 8%: Երիտասարդների շրջանում իրականացված հետազոտությունները ևս փաստում են, որ երիտասարդների աշխատանքային տարիքը սկսում է 23 տարեկանից, ինչը խոցելի է դարձնում երիտասարդների մի քանի պարամետրով՝ ֆինանսական անկախության, կենցաղային անկախության և արդյունքում նաև մտավոր անկախության տեսանկյունից:

¹ Նկարը. <https://i.pinimg.com/736x/eb/26/3b/eb263b8bcdf2fd9ec83556355dad529f--career-ideas-career-planning.jpg>




Գծապատկեր 1. Երիտասարդների զբաղվածության ու գործազրկության մակարդակը, (%), ԱՎԾ, 2017թ.

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից մշակված «Երիտասարդների անկախության համաթիվ» մեթոդաբանությամբ իրականացված վերլուծության համաձայն, Հայաստանում երիտասարդները բնութագրվում են միջինից ցածր ընդհանուր անկախության ցուցանիշով. անկախության ինդեքսի միջին արժեքը կազմել է 0.4 բալ [0-1] սանդղակի համար: Երիտասարդների անկախության համաթիվը ներառում է չորս հիմնական բաղադրիչներ՝ ֆինանսական անկախություն, տնտեսական անկախություն, մտավոր և կենցաղային անկախություն: Երիտասարդների անկախության համաթիվը սերտորեն կապված է աշխատաշուկայում ներգրավվածության հետ. զբաղված և չգրադված երիտասարդների անկախության ինդեքսի միջին արժեքները նշանակալիորեն տարբերվում են, ընդ որում՝ աշխատաշուկայում ներգրավված երիտասարդները դրսևորում են առավել բարձր անկախություն²:

Միջինում առավել անկախ են արական սեռի ներկայացուցիչները: Տարիքը ևս նշանակալի գործոն է. տարիքի աճին զուգընթաց՝ անկախությունը ևս ավելանում է: Սա ևս վկայում է այն մասին, որ զբաղվածությունը նպաստում է առավել անկախ լինելուն: Ինչպես տեսանք, տարիքին զուգահեռ ավելանում է երիտասարդների զբաղվածության մակարդակը:

² ՀՀ Երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2013թ. http://www.vstudies.am/wp-content/uploads/2014/12/The_issues_of_youth_employment_in_the_RA_armenian.pdf [01.12.2017թ]



Գծապատկեր 2. Երիտասարդների զբաղվածության մակարդակը, (%), ԱՎԾ, 2017թ.

Կրթությունը և կարևոր գործոն է. ինչքան բարձր է կրթական մակարդակը, այնքան ավելի անկախ է երիտասարդը: Կրթությունը դառնում է այն հիմնական գործոնը և երաշխիքը, որը կարող է նպաստել զբաղվածությանը: Սակայն մասնագիտական կրթությունը ոչ միշտ է դառնում այդ երաշխիքը: Դրա համար կան մի շարք պատճառներ՝

- **Մասնագիտական կրթության որակը՝** ՀՀ-ում բարձրագույն կրթական համակարգը հիմնականում ակադեմիական/ տեսական, քան պրակտիկ կողմնորոշում ունի: Ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում աշխատաշուկայում երիտասարդ կադրերի ներգրավվման հետ կապված: Ուսումնառության ընթացքում ունեցած պրակտիկան հիմնականում ձևական բնույթ է կրում: Երիտասարդները չեն ստանում, կիրառական և հետազոտական անհրաժեշտ հմտություններ: Ներկայումս կրթության որակի վերահսկողությունը իրականացվում է հենց կրթական համակարգի ներսում: Սակայն առավել արդյունավետ կլինեք, եթե գործատուն ոչ միայն հանդես գար որպես պատվիրատու, այլև որպես կրթական գործընթացի վերահսկող և գնահատող: Կադրերի պատրաստման և վերապատրաստման անհրաժեշտ ռեսուրսների սակավությունը (թանկարժեք տեխնոլոգիաների ներմուծում, նյութատեխնիկական թարմացված բազա) լրացուցիչ խնդիրներ են ստեղծում կրթական համակարգի համար:
- **Աշխատաշուկայի և կրթության կապը՝** ՀՀ-ում մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի շահերի վեկտորները տարբեր ուղղություններ ունեն: Չնայած պետության

կողմից ձեռնարկված միջոցառումներին, էական տարբերություն է նկատվում կրթական համակարգի առաջարկի և աշխատաշուկայի պահանջարկի միջև: Մասնագիտական կրթության համակարգը հիմնականում ուղղորդված է սեփական ծառայությունների առաջնային (ներքին) սպառողը՝ ուսանողներին և ոչ թե երկրորդային (արտաքին սպառողը) գործատուն: Մասնագիտական կրթության համակարգը իր աճի տեմպերով հետ է մնում աշխատաշուկայի պահանջներից: Երբ կրթական հաստատությունները կողմնորոշված են միայն դեպի մասնագիտությունների առկա շրջանակը, ապա որոշ մասնագիտացումների համար աշխատաշուկայում առաջանում է աշխատուժի ավելցուկ, իսկ մյուս մասնագիտությունների համար զգալի պակասորդ է նկատվում: Ներդրված է կրթությունից աշխատաշուկա անցման ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

- **Մասնագիտական կողմնորոշումը՝** ՀՀ-ում արդյունավետ չի գործում մասնագիտական կողմնորոշման համակարգը: Արդյունքում երիտասարդները մասնագիտություն ընտրելիս առաջնորդվում են հասարակության մեջ ձևավորված կարծրատիպերով, ծնողների ուղղորդմամբ, հաճախ ընտրում են ուղղակի բուհը, բայց ոչ կոնկրետ մասնագիտությունը, մասնագիտությունների հասարակական հեղինակությամբ, արդյունքում փոխարենը դուրս են մնում իրականում պահանջված մասնագիտությունները: Մի շարք միջոցառումների՝ այն է աշխատանքի տոնավաճառների, աշխատանքային փոխանակումների ընթացքում մշտադիտարկման և գնահատման համակարգի թուլությունը թույլ չի տալիս այս միջոցառումները համապատասխանեցնել երիտասարդների սպասումներին

Առաջարկներ

- Համակարգային աշխատանքների իրականացում երիտասարդների զբաղվածության ցուցանիշների բարձրացման համար՝ ներգրավելով բոլոր շահառու կողմերին և կիրառելով նրանց ներուժը՝ ուսումնական հաստատություններ, երիտասարդական կազմակերպություններ, աշխատանքի որոնման կազմակերպություններ, պետական և մասնավոր կայքէջեր, միջազգային կառույցներ:
- Մասնագիտական կողմնորոշման համակարգի կատարելագործում՝ ներգրավելով ուսուցիչներին, ծնողներին և ներկայիս մասնագիտությունների՝ նրանց բովանդակային կողմերի և պահանջվածության վերաբերյալ աշակերտներին տեղեկացում և դպրոցներում մասնագիտական կողմնորոշման համակարգի ակտիվ ներդրում: Աշակերտների մոտ լրկալ և հանրապետական աշխատաշուկաների վերաբերյալ պատկերացումների ձևավորման աշխատանքներ: Արհեստների նկատմամբ երիտասարդների մոտ պատկերացումների ձևավորում:

- Պետական ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով՝ բարձրացնել երիտասարդների շրջանում զբաղվածության պետական ծառայության և պետական այլ ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածությունը:
- Փորձաշրջանի ֆորմալացում և երիտասարդի և գործատուի համար փոխադարձ երաշխիքների ապահովում իրավական մակարդակում, ինչը երիտասարդին թույլ կտա շահագործված չլինել փորձաշրջանի սահմաններում, իսկ գործուտոնին՝ վստահ լինել, որ իր կողմից իրականացված ուսուցումը չի լինի ժամանակի և ռեսուրսի վատնում:
- Ուսման և աշխատանքի ինտեգրում՝ ուսման ընթացքում աշխատանքի տեղավորման հնարավորությունների ստեղծում:
- Երիտասարդների շրջանում աշխատանքի ընդունման գործընթացում երաշխավորողների ինստիտուտի խթանում:
- Անհրաժեշտ է մշտապես թարմացնել տեղեկատվությունը աշխատաշուկայի իրական պահանջարկի վերաբերյալ և իրականացնել համապատասխան փոփոխություններ կրթական համակարգում:
- Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի համագործակցության այլընտրանքային մոդելների կիրառում.
 - Ճյուղային պատվերները ըստ ոլորտների/ կոնկրետ գործատուի
 - Պրակտիկայի, դիպլոմային և կուրսային աշխատանքների կազմակերպումը գործատուի կողմից/ մասնակցությամբ
 - Ինտեգրացված կրթական-արտադրական ծրագրերի մշակում: